

ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ՋՐԱՐՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ՕՐԱԿԱՐԳ – Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարքի գյուղական համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանի և ավագանու կողմից 2014 թվականի ընթացքում կատարած աշխատանքների մասին:

Ժողովը նախագահում էր համայնքի ղեկավար Ղ.Ղազարյանը  
Քարտուղարությամբ՝ Աշխատակազմի քարտուղար Ա.Արեյանի

Ժողովին մասնակցում էին Արմավիրի մարզպետարանի Մշակույթի և սպորտի բաժնի պետ Արմեն Թովմասյանը, դպրոցի, բուժ.ամբուլատորիայի աշխատակիցները, մանկապարտեզի տնօրենը, ավագանու անդամները և համայնքի թվով 27 բնակիչներ:

Համայնքի ղեկավարը իր զեկույցում ներկայացրեց 2014թ-ի ընթացքում կատարած աշխատանքները : 2014 թվականի Ջրարքի բյուջեով հաստատվել է 30248600/ երեսուն միլիոն երկու հարյուր քառասունութ հազար վեց հարյուր / դրամի եկամուտ, մուտքագրվել է 32263880 / երեսուներկու միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար ութ հարյուր ութսուն / դրամ, որը կազմում է ընդհանուր բյուջեի 106.67 %-ը:

Ջրարքի համայնքում հողի հարկի և գույքահարկի հավաքագրման աշխատանքները իրականացվում են շատ արդյունավետ, համայնքի ղեկավարի հետևողական աշխատանքի շնորհիվ սկսած 2010 թվականից հողի հարկի և շենքերի և շինությունների գույքահարկի գծով ապառքներ չկան:



Ջրարքի համայնքի ղեկավար

Աշխատակազմի քարտուղար

Ղ.Ղազարյան

Ա.Արեյան

## ՁԵԿՈՒՑԱԳԻՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՐՔԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի Ա.Թովմասյան, համազյուղացիներ և հյուրեր, թույլ տվեք ձեր ուշադրությանը ներկայացնել 2014 թվականի ընթացքում գյուղապետարանի աշխատակազմի, իմ և ավագանու կողմից կատարված աշխատանքները:

Նախապես ցանկանում եմ ձեզ տեղեկացնել, որ համայնքի բնակչության թիվը կազմում է 1830, տնտեսությունների թիվը՝ 307:

Զրարքի գյուղական համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու համատեղ գործունեության արդյունքում 2014 թվականին լուծվեցին բնակչության համար հիմնախնդիրներ հանդիսացող մի շարք հարցեր: Իրականացվեցին աշխատանքներ, որոնք ուղղված էին համայնքի բնակչության բարեկեցության ապահովմանը և համայնքի ներդաշնակ զարգացմանը:

Համայնքի բնակիչները իրագնելված են եղել համայնքում կատարված աշխատանքներին, և նրանց տրվել է ամբողջական ու հավաստի տեղեկատվություն:

Գյուղապետարանի աշխատանքները 2014 թվականին եղել է առավել բաց, թափանցիկ, բնակիչները հնարավորություն են ունեցել սպառիչ տեղեկանալ գյուղապետարանի գործունեության մանրամասներին:

Ստորև ներկայացվում են 2014 թվականին կատարված աշխատանքները և դրանց ֆինանսավորման համար ծախսված միջոցները.

2005 թվականից համայնքում գործում է մանկապարտեզ, որտեղ հաճախում են 61 նրեխա: Տարեկան հաստատված նախահաշվի համաձայն համայնքի բյուջեից որպես ընթացիկ անհատույց վճարներ՝ սուբսիդիան, <<Զրարքի համայնքի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 2014 թվականին հատկացվել և ամբողջությամբ փոխանցվել է 7200000/ յոթ միլիոն երկու հարյուր հազար / դրամ գումար: Մանկապարտեզի աշխատանքները պարբերաբար վերահսկվում են գյուղապետարանի կողմից: Գյուղապետարանը հնարավորինս աշխատում է հոգալ մանկապարտեզի խնդիրները:

2014 թվականի ընթացքում ավագանու որոշմամբ համայնքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնք սկսած 2005 թվականից վերածվել են գեղեցիկ ավանդույթների.



Միջոցառում կազմակերպվեց Երեխաների պաշտպանության օրվա՝ հունիսի 1-ի կապակցությամբ: Միջոցառմանը հրավիրված էին հինգ հեքիաթի հերոսներ, երկու ժամյա միջոցառումը մեծ ուրախություն և ոգևորություն պատճառեց համայնքի երեխաներին: Միջոցառման կազմակերպման համար հատկացվել է է 55000/ հիսունհինգ հազար/ դրամ:

Միջոցառումը, որի ընդհանուր գումարը կազմում էր 558000/հինգ հարյուր հիսունութ հազար/ դրամ, գյուղապետարանը կազմակերպվեց կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի կապակցությամբ:

Միջոցառման ժամանակ համայնքի թվով 70 կին թոշակատուներից յուրաքանչյուրին տրամադրվեց 5200 / հինգ հազար երկու հարյուր/ դրամ արժողության նվերներ: Նույն օրը միջոցառման ժամանակ, գյուղապետարանը համայնքի միջնակարգ դպրոցի անձնակազմի թվով 25 կին աշխատողներին և մանկապարտնզի թվով 11 կին աշխատակիցներին նույալնս նվիրեց 5200 / հինգ հազար երկու հարյուր / դրամ արժողությամբ նվերներ: Տոնի առթիվ 5200 /հինգ հազար երկու հարյուր/ դրամ արժողությամբ նվերներ տրամադրվեցին նաև համայնքում միակ կին ազատամարտիկին և միակ կին ավագանու անդամին, բուժկետի 2 և փոստային կապի 1 աշխատակիցներին:

Միջոցառում կազմակերպվեց Նաղթանակի և խաղաղության տոնի՝ Մայիսի 9-ի կապակցությամբ: Միջոցառմանը հրավիրված էին Ղարաբաղյան պատերազմին մասնակցած համայնքի ազատամարտիկները:

Միջոցառման կազմակերպման համար համայնքի բյուջեից հատկացվեց 160000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ դրամ գումար:

Միջոցառում կազմակերպվեց նաև վերջին զանգի կապակցությամբ: Համայնքի թվով 12 շրջանավարտների նվերների ձեռք բերման համար գյուղապետարանը հատկացրել է 100000 /մեկ հարյուր հազար / դրամ գումար:

Միջոցառում կազմակերպվեց Գիտելիքի օրվա՝ Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ: Համայնքի ավագանու որոշմամբ 125220 /մեկ հարյուր քսանհինգ հազար երկու հարյուր քսան / դրամ գումար հատկացվեց առաջին դասարանի թվով 13 աշակերտների համար գրենական պիտույքներ և աշակերտական պայուսակներ ձեռք բերելուն:

Միջոցառում կազմակերպվեց Ռիսուցչի օրվա՝ հոկտեմբերի 5-ի կապակցությամբ: Միջոցառման ժամանակ համայնքի միջնակարգ դպրոցի թվով 24 ուսուցիչների նվերների ձեռքբերման համար հատկացվեց 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ գումար և յուրաքանչյուրին տրամադրվեց 4170 /չորս հազար հարյուր յոթանասուն/ դրամ արժողությամբ նվերներ:

Միջոցառում կազմակերպվեց դպրոցում և մանկապարտնզում: Ջրաբքի համայնքի միջնակարգ դպրոցի I-IV դասարանի թվով 112 աշակերտներին,



Ջրարբի համայնքի մանկապարտեզի թվով 61 նրելսաներին և համայնքի թվով 6 հաշմանդամ նրելսաներին, ինչպես նաև գյուղապետարանի և մանկապարտեզի աշխատակիցների թվով 20 նրելսաներին Ամանորի առթիվ յուրաքանչյուր նրելսայի նվիրվեց 2500/ նրկու հազար հինգ հարյուր/ դրամ արժողությամբ նվերներ: Այդ օրը մանկապարտեզում՝ Ամանօրյա հանդեսի ժամանակ, մեծ անակնկալ մատուցվեց նրելսաներին: Մանկապարտեզի միջոցառմանը հրավիրվել էին նրելսաների կողմից շատ սիրված հեքիաթի հերոսները, Չմեռ պապն ու Չյունանուշը: Միջոցառման կազմակերպման և նվերների ձեռքբերման համար հատկացվեց 555000 / հինգ հարյուր հիսունհինգ հազար/ դրամ գումար:

Համայնքի միջնակարգ դպրոցը իր հիմնախնդիրներով մշտապես եղել և մնում է համայնքի ղեկավարի և ավագանու ուշադրության կենտրոնում: Բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկվում են դպրոցին աջակցելու հարցում: 2006 թվականից սկսած համայնքի գյուղապետարանը փոխանցում է աշակերտների դպրոցական դասագրքերի վարձավճարներն ամբողջությամբ: Ջրարբի գյուղական համայնքի միջնակարգ դպրոցին ֆինանսական օգնություն ցույց տալու նպատակով, դպրոցի դասագրքերի համար 2014 թվականին հատկացվել և փոխանցվել է 605530 (վեց հարյուր հինգ հազար հինգ հարյուր երեսուն) դրամ գումար:

Ջրարբի համայնքի գյուղապետարանը հոգացել է նաև դպրոցի I-XII դասարաններին պատմամշակութային օջախներ տանելու և ամառային արձակուրդներին էքսկուրսիաներ կազմակերպելու համար նախատեսված ճանապարհածախսերը, որոնց ընդհանուր գումարը կազմում է 183000 / մեկ հարյուր ութսուներեք հազար/ դրամ:

2014 թվականը համայնքի համար կարևորվեց նրանով, որ համայնքում սկսվեցին երկար տարիներ հիմնախնդիր դարձած Մշակույթի տան կապիտալ վերանորոգման աշխատանքները: Համայնքի ղեկավարի ճիշտ տնտեսավարման քաղաքականության և խնայողությունների շնորհիվ, համայնքի բյուջեի միջոցների հաշվին կատարվեցին հսկայական շինարարական և կոսմետիկ աշխատանքեր: Հիմնովին փոխվեցին Մշակույթի տան պատուհանները, դռները և տանիքը: Մշակույթի տանը կից կառուցվեցին հանդերձարաններ և ներկա պահին իրականացվում են սալիկապատման աշխատանքները: Նախատեսվում է Մշակույթի տան վերանորոգման և կահավորման աշխատանքները ավարտել 2015 թվականի 1-ին կիսամյակին և հանձնել շահագործման: Մշակույթի տան վերանորոգման աշխատանքների համար համայնքի բյուջեից հատկացվել է ֆոնդային բյուջեից՝ 3659000/ երեք միլիոն վեց



հարյուր հիսունինը հազար / դրամ, վարչական բյուջեից՝ 1300000 /մեկ միլիոն երեք հարյուր հազար/ դրամ:

2014 թվականին լուծվեց ես մեկ կարևոր խնդիր: Համայնքում Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը խթանելու համար, կառուցվեց ֆուտբոլի դաշտ, այն ամբողջությամբ ցանկապատվեց, որի կառուցման և ցանկապատման աշխատանքների համար համայնքի ֆոնդային բյուջեից հատկացվեց 1375000 /մեկ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար / դրամ գումար, վարչական բյուջեից 200000 /երկու հարյուր հազար/ դրամ:

2014 թվականին Ջրաբքի համայնքի բյուջեով նախատեսված 4269 <<Փողոցների լուսավորում >> հողվածից 232000 /երկու հարյուր երեսուներկու հազար/ դրամ գումար է հատկացվել համայնքի Ս.Խաչատրյան փողոցի սկզբնամասում և Ավ.Բսահակյան փողոցի վերջնամասում գիշերային լուսավորություն անցկացնելու համար:

2014 թվականին իրականացվել են նաև խմելու ջրի խորքային հորերի մասնակի վերանորոգման աշխատանքներ: Մ.Սարյան փողոցի խմելու ջրի խորքային հորի վրա նոր էլեկտրական պոմպ տեղադրելու և ջրագծերի խողովակները վերանորոգելու համար ծախսվել է 600000 /վեց հարյուր հազար դրամ:

Համայնքի ավագանու որոշմամբ 900000 /ինը հարյուր հազար/ դրամի պայմանագիր է կնքվել Ջրաբքի համայնքի բնակիչ Ս.Բաղդասարյանի հետ, ըստ որի համայնքում յուրաքանչյուր շաբաթ, շաբաթական երկու անգամ, իրականացվում է աղբահանման աշխատանքներ, որի արդյունքում մաքրվել են համայնքի փողոցներն ու մայթերը: Աղբահանման աշխատանքների դիմաց վարձատրությունն ամբողջությամբ կատարվում է գյուղապետարանի միջոցներով: 2014 թվականի ընթացքում աղբահանման աշխատանքների դիմաց վճարվել է 899800/ ութ հարյուր իննսունինը հազար ութ հարյուր / դրամ գումար:

2014 թվականին համայնքի բյուջեից գումար է հատկացվել նաև գյուղապետարանին պատկանող ՎԱԶ 2106 մակնիշի տրանսպորտային միջոցի վերանորոգման և գազալիցքավորման համար, որոնց ընդհանուր գումարը կազմում է 613244/ վեց հարյուր տասներեք հազար երկու հարյուր քառասունչորս/ դրամ:

2014թվականին համայնքի ավագանու որոշմամբ որպես ֆինանսական աջակցություն համայնքի բյուջեից 150000 / մեկ



հարյուր հիսուն հազար / դրամ հատկացվեց « Արմավիրի մարզի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ «<Լավագույնը իր ոլորտում>> ամենամյա մրցույթ-մրցանակաբաշխություն կազմակերպելու համար: Նույն կազմակերպությանը փոխանցվեց 50000 /հիսուն հազար/ դրամ՝ «<Արմավիրի մարզի անվանի մարդիկ>> գրքի հրատարակման գործին աջակցելու նպատակով:

2014 թվականի ընթացքում համայնքի ավագանու որոշմամբ համայնքի թվով 15 ընտանիքների իրենց դիմումների համաձայն տրամադրվել է սոցիալական օգնություն՝ ընդամենը 405000 / չորս հարյուր հինգ հազար/ դրամ:

2009 թվականից համայնքում ձևավորվել է մի ավանդույթ, ըստ որի հարազատին կորցրած ընտանիքներին տրամադրվում է 50000/ հիսուն հազար/ դրամ օգնություն, 2014 թվականի ընթացքում հարազատին կորցրած 10 ընտանիքի տրամադրվել է 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ աջակցություն:

Համայնքի բյուջեի 187000 /մեկ հարյուր երեսունյոթ հազար/ դրամ գումար է հատկացվել ծաղկեպսակների ձեռքբերման համար:

2014 թվականի Ջրարբի բյուջեով հաստատվել է 30248600/ երեսուն միլիոն երկու հարյուր քառասունյոթ հազար վեց հարյուր / դրամի եկամուտ, մուտքագրվել է 32263880 / երեսուներկու միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար ութ հարյուր ութսուն / դրամ, որը կազմում է ընդհանուր բյուջեի 106.67 %-ը:

Ջրարբի համայնքում հողի հարկի և գույքահարկի հավաքագրման աշխատանքները իրականացվում են շատ արդյունավետ, համայնքի ղեկավարի հետևողական աշխատանքի շնորհիվ սկսած 2010 թվականից հողի հարկի և շենքերի և շինությունների գույքահարկի գծով ապառքներ չկան:

Պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և մուտքագրված գույքահարկի, հողի հարկի, այլ ոչ հարկային եկամուտների, վարձակալական հողի հարկի և տեղական տուրքերի գանձման արդյունքում մուտքագրվել են հետևյալ եկամուտները՝

2014 թվականին մուտքագրվել են հետևյալ եկամուտները՝  
Գույքահարկ շենքերի և շինությունների և փոխադրամիջոցների